

ԷՌԱՆԱ. ՄԱՆԵԱ. ՇԻՐԻՆՅԱՆ

ԴՊՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԵՎ ԼԵՌԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐՈՒՄ

Կիլիկյան Հայաստանի գրականությունը, հետևելով հայ ավանդական դպրությանը (Երբեմն էլ վերականգնելով այն), այնուամենայնիվ ուներ բազում յուրահատկություններ, որոնք պայմանավորված էին բնական պատճառներով: Առաջին հերթին դա այն ժամանակաշրջանն էր, որում կազմավորվեց Կիլիկյայի հայկական թագավորությունը: 11-րդ դարը՝ կատարվող բուռն իրադարձությունների պատճառով, կարելի է անվանել շրջադարձային պատմության մեջ: Այդ իրադարձությունների շարքում էին, նախ՝ Հռոմի և Բյուզանդիայի միջև վաղուց հասունացող խզումը, որը կատարվեց 1054 թ., Բյուզանդիայի հետզհետե թուղացումը, քաղաքական գաղափարախոսության փոփոխումը և Արևմտաքում, և՛ Արևելքում, տարածքների վերաբաշխումը և այլն: Պակաս կարևոր նշանակություն չուներ նաև Կիլիկյան Հայաստանի աշխարհաքաղաքական շրջապատը՝ հարեանությունը, որը պարզ է, որ իր ազդեցությունը պետք է ունենար կյանքի տարբեր ոլորտներում, այդ թվում և մշակութային: Աերտ շփումները հարեան երկրների հետ, խաչակրաց արշավանքները, լայնածավալ առևտորային հարաբերությունները (մասնավորապես Վենետիկի և Ջենովայի հետ), հոգևոր ասպետական կամ ուազմա-վանական միաբանությունների առաջացումը, ևս մեծ ազդեցություն գործեցին հայ ավանդական դպրության վրա: Բազում փոփոխություններ կրեց նաև լեզուն՝ գրաբարը փոխարինվեց խոսակցականին ավելի մոտ միշին հայերենով, ինչը ևս իր ազդեցությունն ունեցավ հայ գրականության վրա: Զարմանալի չէ, ուստի, որ նշված ժամանակաշրջանում Կիլիկյան Հայաստանում մեծ վերելք ապրեց հայ գրականությունը, մասնավորապես գրական ավանդույթները, զարգացավ ժողովրդական բանահյուսությունը, ստեղծվեցին և արմատավորվեցին գրական նոր տեսակներ, նոր ժանրեր՝ հանգավորված պատմություն, էլեգիա, քնարական պոեզիա, փոքրիկ գրուցներ, առակներ ու հանելուկներ, ինչպես նաև «Մանրուսմունք» և «Խազգիրք» կոչվող երաժշտական բացառիկ ժողովածուները:

Ինչպես Մեծ Հայքում, այնպես էլ Կիլիկիայում դպրությունը գարգանում էր գրչության կենտրոններում կամ վարդապետարաններում բարձրագույն կրթական օջախներում, որոնք հիմնականում տեղակայված էին տարբեր վանքերում կամ վանական համալիրներում: Շարունակելով ավանդական մոտեցումները՝ այդ կենտրոնները պահպանում էին «գպրոց» հասկացության շարունակական նությունը. վարդապետ-ուսուցիչները փոխանցում էին իրենց գիտելիքները և

մեթոդներն աշակերտներին, որոնք իրենց հերթին գրեթե պարտավոր էին գնալ և հիմնել իրենց դպրոց-վանքերը և հաջորդ սերնդին ժառանգել կուտակված գիտելիքներն ու դպրության ավանդույթները։ Կիլիկիայի տարածքում գործում էին բազում հայտնի, մեծահամբավ վարդապետարաններ՝ Ակների, Դրազարկի, Մաշկերի, Սսի, Տարսոնի, Մեծքարի, Գեսվանց և շատ ուրիշներ։

Սրանց շարքում ուրուց տեղ էին գրավում Սև լեռան հայկական վանքերը, որոնք մաս էին կազմում Ամանոսի (Սև) լեռների վրա տեղակայված բազմաթիվ վանքերի։ Դրանց գործունեությունը գրանցված է դեռևս 5-6-րդ դարերից, սակայն այդ շրջանի վերաբերյալ տեղեկությունները սակավաթիվ են։ Սկսած 11-րդ դարից, կարելի է խոսել այդ վանքերի գործունեության ծաղկման, և անգամ «միջազգային» շրջանի մասին։ Ի դեպ, այդ ժամանակ, Կիլիկիայի սահմաններն արևելքում անցնում էին հենց Ամանոսի լեռների վրայով¹։

Ավելին, հնարավոր է ասել, որ Սև լեռան բազում վանքերը հանդիսանում էին դպրության յուրօրինակ մի կենտրոն, որտեղ ապրում և աշխույժ աշխատանք էին ծավալում տարբեր ազգության պատկանող ասորի, հայ, հուն, լատին, վրացի և այլ ազգության, ժամանակի առաջադեմ գիտնական վանական վարդապետները, ովքեր կարող էին գտնել այստեղ ոչ միայն հոգևոր հասունություն, այլև գիտական նորություններ։ Սև լեռան վանքերի այս շրջանին վերաբերող տվյալներն ես շատ չեն. առավել սակավաթիվ են դրանց նվիրված ուսումնասիրությունները, մինչեռ այստեղ գրանցված աշխույժ գործունեությունը, ընդհանրապես վանքերի ստուգ քանակը, անվանումները և դրանց պատկանելությունը բազում հարցականներ են հարուցում։ Հունական և հայկան աղբյուրներում առկա են վկայություններ, որոնք փաստում են այս վանքերում բնակվող տարբեր ազգերի վանականների միջև եղած որոշ դավանաբանական տարածայնությունների և անգամ լարվածության մասին, սակայն միևնույն ժամանակ, հենվելով այդ իսկ աղբյուրների տեղեկությունների վրա, կարելի է խոսել թվարկված ազգերին պատկանող վարդապետների մրցակցության և գիտական նյութի ու մոտեցումների բաղդատաման մասին։ Պարզ է, որ այս ամենը նույնպես նպաստեց մասնավորապես հայկական, վրացական և ասորական գրականության հարստացմանը։

Դատելով աղբյուրներից սկսած 11-րդ դարից, Սև լեռան հայկական վանքերը բավական մեծ թիվ էին կազմում։ Ցայսօր հայտնի են տասից ավելի վանքեր, որոնցից են՝ Կարմիր վանք, Շափիրին, Քարաշիտու, Արքայաքաղին, Շուղր վանք կամ անապատ, Մաշկերի, Պառահո, Արեգ կամ Արեգին (Արեգին) վանք

¹ J. J. S. Weitenberg, “The Armenian Monasteries in the Black Mountain”, in: K. N. Ciggaar, D. M. Metcalf (ed.), *East and West in the medieval Eastern Mediterranean. I. Antioch from the Byzantine Reconquest until the end of the Crusader principality. Acta of the congress held at Herten Castle in May 2003* (Orientalia Lovaniensia Analecta, 147), Leuven -Paris -Dudley/MA, 2006, p. 79-93.

կամ անապատ, Վարդկան, Բարսեղյանց, Պաղակձիակ, և Աստվածածին՝ Ռոփիոն (բառացի նշանակում է «նուան պտուղ») վանք և այն: Այս վանքերում սովորել և գործել են այնպիսի համբավավոր վարդապետներ, ինչպիսիք են Ստեփանոս Մանուկը, նրա աշակերտներ իգնատիոս Սևլեռնցին, Գրիգոր Պահլավունին, Ներսես Շնորհալին, Սարգիս Շնորհալին և այլք: Բազում էին նաև Մեծ Հայից եկած վարդապետները՝ Գևորգ Մեղրիկ, Գրիգոր Լոռեցի, Կիրակոս Բանասեր, Միհիթար Գոշ և այլք, որոնցից ոմանք վերադարձան Հայաստան, ոմանք էլ մնացին Կիլիկիայում: Բնական է, որ Կիլիկիա այցելած հեղինակները հետագայում, իրենց երկերում նկարագրել և բնութագրել են Կիլիկիայում, երբեմն էլ հարեւան երկրներում կատարված իրադարձությունները:

Ուսումնասիրելով այս հեղինակների գործունեությունը, հնարավոր է ասել, որ Սև լեռան հայկական վանքերում տեղի ունեցավ հին, երբեմն անգամ մոռացված, ավանդույթների հաշտեցումը նոր գիտական մոտեցումների հետ, ինչը մեծ զարկ տվեց հայկական միջնադարյան սքոլաստիցիզմի զարգացմանը և մասնավորապես Աստվածաշնչի մեկնությունների հայկական «դպրոցի» հետագա գործունեությանը և ուժեղացմանը:

11-րդ դարում, սակայն, Սև լեռան վանքերը ոչ միայն բաժանված էին հույների, ասորիների, հայերի, լատինների և վրացիների միջև, այլև գրանք ներառում էին դավանաբանական տարբեր պատկանելություն ունեցող խմբեր. օրինակ այստեղ առկա էին թե՛ ուղղափառ, թե՛ կաթոլիկ և թե՛ նախաքաղկեդոնական քրիստոնեական վարդապետությանը հետևող անձեր: Այսպես, թվարկված հայկական վանքերի թվում կային նաև քաղկեդոնական հայերին² պատկանող վանքեր, օրինակ՝ Պաղակձիակը, և. Աստվածածին, Ռոփիոն վանքը, Արեգ վանքը:

Հատկանշական է, որ Անտիոքի մոտակայքում գտնվող, թվով մի քանի տասնյակ այս վանքերը ժամանակին հիմնականում ասորական էին, ինչը, ի

² Ի դեպ, հարկ է նշել, որ հայ հաղկերնականների, այսպես կոչված «ծարերի» կամ, ինչպես ավելի ընդունված է մեզանում՝ «ծայրերի», ներկայությունը Սև լեռան վաներում արձանագրված է շատ ավելի վաղ շրջանից: Բացի այդ բավական մեծ թվով բաղկեդոնիկ հայեր կային նաև հայոնի և Սաքքասի կամ Սաքքայի մենաստանում, ինչպես նաև Սնտիփից ոչ հեռու գտնվող Հրաշ լեռան՝ Սիմեոն Ստիլիտեսի վանքում: Քաղկեդոնիկ հայերի գոյուրյան և գործունեության հարցը սակավ է ուսումնասիրված մեզանում, մինչդեռ այն անհրաժեշտ է ենթարկել անաշառ հետազոտության, այսպես մենք կորցնում ենք մի մեծ մշակութային շերտ, որը պարունակում է շափազանց կարևոր տեղեկություններ պատմության մեջ մեծ դեր խաղացած ազգուրյամբ հայ անձանց մասին (այսպես, Քաղկեդոնի ժողովից հետո բյուզանդական մենաստաններ բաշխած հայերը, որոնք մեծապես նպաստել են այդ անապատների ստեղծմանը, իսկ երեւմն էլ հիմնադրել են դրանք (ինչպես օրինակ և Սաքքայի մենաստանի դեպքում) և այլ բազում բյուզանդական տարբեր ոլորտների գործիքներ), որոնք որովհետև ընտրել էին այլ դավանաբանական պատկանելություն, երեւմն չեն հիշատակվել մեզանում, ինչը, ի դեպ, տեղին է տալիս այդ տվյալների երեւմն ոչ անաշառ օգտագործմանն այլոց կողմից:

գեպ, պարզ երևում է որոշ վանքերի անվանումներից, և տեղակայված էին Բյուզանդիային պատկանող տարածքում, սակայն 1108 թ. Դեաբոլի պայմանագրով դրանք փոխանցվեցին Անտիոքի պրինց Բոհեմոնդ I-ին: Այդ մասին է վկայում նաև Աննա Կոմնենին «Ալեքսիադ»-ում՝ հորը՝ Ալեքսիոս Կոմնենոսին նվիրված պատմության մեջ: Այստեղ, Բոհեմոնդ I-ի անունից շարադրված պարտավորությունների թվում, հիշատակվում են նրան անցած հողերը, որոնց թվում են նաև Սև լեռան վանքերը, «բացառությամբ միայն այն տարածքների, որոնք Խուրենյաններինն են՝ կառն և Թեոդորոս (ՏԻԸ! = Թորոս) հայերինը, ովքը Զեր [կայսրության] հպատակներն են»³: Սակայն բացի այստեղ նշված անուններից, զանազան աղբյուրներից հայտնի է, որ կային այլ անձինք ևս, որոնք, կարելի է ասել, տնօրինում էին որոշ վանքեր: Այսպես օրինակ, գիտենք, որ մի քանի վանքեր գտնվում էին Հայոց իշխանների իրավասության ներքո: Դրանցից մեկը՝ Գող Վասիլ անվան տակ հայտնի Եփրատացիքում կազմված հայկական իշխանության հիմնադիրն էր: Վասիլ իշխանին հաջողվել էր գրավել բազում տարածքներ և իր հզորության գագաթնակետին նրա իշխանությունը «Հյուսիս-հարավ ուղղությամբ տարածվում էր Մելիտենի սահմաններից մինչև Պիր, իսկ արևելք-արևմուտք ուղղությամբ՝ Եփրատից մինչև Մարաշ, ընդգրկելով Քեսունը, Խապանը, Հիսն-Մանսուրը, Պեհեսին, Հոռմկան և որոշ մանր բերդեր»⁴: Բազում քաղաքների ու բերդերի նվաճումը հասկանալի երևույթ է իշխանի համար, սակայն վանքի ձեռքբերումն աշխարհականի կողմից՝ բացատրության կարիք ունի: Կարծում եմ, որ այս գեպքում մենք գործ ունենք մի երեսովիթի հետ, որը կոչվում էր խարιստիրաւ⁵, բառացի՝ «Հնորհակալական զոհաբերություն» (իսկ խարιստիկός-ը՝ «նվիրված», «Հնորհված»): Հին Հունաստանում այս բառով սահմանվում էին հազթանակի համար աստվածներին մատուցվող զոհաբերությունները: Միջնադարում, մասնավորապես 10-րդ դարում, երբ Բյուզանդական կայսրությունում վանքերը բազմացել էին և դրանցից շատերն այնքան խեղճ էին, որ միաբանները չէին կարողանում հոգալ իրենց տարրական խնդիրները, համատարած շարժում դարձավ «խարիստիկարիատ»-ը՝ վանքերի փոխանցումը հարուստ աշխարհիկ անձանց, որոնք

³ Anna Comnena, *Alexias*, book 13, chapt 12, sect. 18 անεս δηλονότι τῆς τῶν Ρουπενίων διακρατήσεως, Λέοντος τε καὶ Θεοδώρου τῶν Ἀρμενίων γεγονότων ἀνθρώπων τοῦ κράτους ὑμῶν.

⁴ Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակրաները և հայերը, Եր., 2005, հան. Ա, էջ 421:

⁵ Ավելի մանրամասն այս երևոյթի մասին տես՝ V. Laurent, “Charisticariat et commende à Byzance. Deux fondations patriarchales en Épire aux XIIe et XIIIe siècles”, In: *Revue des études byzantines*, tome 12, 1954, pp. 100-113, J. Darrouzes, “Dossier sur le charisticariat”, in *Polychronion. Festschrift' Franz Dölger zum 75. Geburtstag* (Heidelberg, 1966), s. 150-165, H. Ahrweiler, “Charisticariat et autres formes d'attribution de fondations pieuses aux Xe-XIe s.”, 1967, *Zbornik Radova Vizantolôskog Institouta*, T. 10, pp. 1-28:

ունակ էին և պարտավորվում էին հոգալ հին վանքերի կարիքները և կառուցել նորերը: Այս մարդիկ դառնում էին կտիտորներ, իսկ ձեռքբերված վանքերը փոխանցվում էին նրանց ժառանգներին: Բյուզանդական կայսրերը և պաշտոնյաները, հիմնականում կողմ էին կտիտորական իրավունքին (հմմտ. Հուստինիանոս կայսեր 131-րդ նովելը), սակայն ժամանակի ընթացքում այս երեսվթը ձեռք բերեց մի շարք բացասական հետևանքներ, ինչը զայրուցիթ առաջացրեց որոշ հոգևորականների շրջանում: «Խարիստիկարիատ»-ի ամենամոլի հակառակորդն էր համարվում Անտիոքի պատրիարք Հովհաննես Օքսիտեցին (կամ Հովհաննես V, 1089-1100⁶): Սակայն պարզվում է, որ խնդրո առարկա երեսվթի առավել եռանդուն ընդդիմախոս էր Նիկոն Սևեռնցին (1025 - մ. 1100 և 1110 միշտ ընկած ժամանակահատվածում), որը և մեծ ազդեցություն է ունեցել նշանակած պատրիարքի վրա⁷: Նիկոնի կազմաձ հիմնականում միայնակացների կանոնագրությանը վերաբերող երեք աշխատանքները հետաքրքրական և արժեքավոր տեղեկություններ են պարունակում ոչ միայն այս հարցի, այլև շատ ու շատ այլ խնդիրների վերաբերյալ: Մինչև միայնակաց դառնալը, Նիկոնը ծառայել է Բյուզանդիայի կայսր Կոստանդին IX Մոնոմախոսի բանակում, սակայն տարրեր վանքերում թափառելուց և իր վանքը հիմնելու փորձի տապալումից հետո, լատինների կողմից Անտիոքի գրավումից ի վեր, այսինքն 1098 թ. հետո, նա ապաստան է գտնում Ռոբերտու վանքում, որտեղ շատ քաղկեդոնիկ հայեր էին բնակվում⁸: Նիկոն Սևեռնցին իր գործերում նամակներում (մասնավորապես վերոնշյալ պատրիարքին ուղղված) և հատկապես 1098 թ. գրված, ամենածավալուն «Տակտիկոն» երկում, բազմիցս հանդես է գալիս «խարիստիկարիատ»-ի դեմ: Հետաքրքրական է, որ այդ անդրադարձների թվում առկա է մեկ գեպք, երբ նա, մեղադրելով ոմն իշխան Մարապային (որը համարվում է քաղկեդոնիկ հայերին պատկանող ս. Աստվածածին, Ռոբերտու վանքի⁹ տիրակալը), խոսում է մի հայ ազնվականի մասին, որը կարող է լինել

⁶ Հարկ է նաև նշել, որ 1100 թ. հետո, երբ Հովհաննես V (ըստ ումանց Հովհաննես VII), լուս է Անտիոք, պատրիարքական գահին է բազմում Բենար Վալենսացին, և այդ ժամանակից ի վեր Անտիոքի պատրիարքությունը անցնում է լատինների ձեռքը, իսկ դրա հետ միասին նաև բազում հայ բաղկերնականների վանդեր, բերդեր, բաղամեր և անզամ դժուրյուններ, տես՝ **B. Hamilton**, “Latins and Georgians and the Crusader Kingdom”, *Al-Masaq: Islam and the Medieval Mediterranean*, 2011, vol. 23, p. 119:

⁷ **Լ. А. Герд**, ««Тактикон» Никона Черногорца как источник по истории христианства в Византии», *ВВ*, М., 1994, т. 55, с. 112.

⁸ **Герд**, ««Тактикон»», с. 114.

⁹ Թեև վերը խոսվեց Սև լեռան վաների տարածային պատկանելության վերաբերյալ, սակայն մինչև 1108 թ. (Դեարոլի պայմանագիրը), այնուամենայնիվ, որոշ վաների պատկանելության հարցը լուրջ խնդիր է: Սև լեռան վաների հետագա նակատագրի վերաբերյալ, հատկապես բաղկերնիկ հայերի վաների մասին, որոշ տեղեկություններ կարելի է հաղել Հ. Կազարյանի հոդվածներից, մասնավորապես՝ **Օ. Կազարյան**, “Церковные контакты армян-халкидонитов и латинян в период крестовых походов на Восток (XI-XIII в.)”,

Հենց Վասիլի իշխանը¹⁰: Արդյոք այս մեղադրանքների պատճառով չէ, որ Վասիլը մյուս իշխանների հետ աղաջում էր Գրիգոր Վկայասերին գալ իրենց մոտ, ինչպես տեղեկանում ենք այդ մասին Միսիթար Այրիվանեցու «Ժամանակագրություն»-ից. «Վասիլն եւ այլ իշխանք կիւլիկիոյ տարան աղաջանօք առ ինքեանս զտէր Գրիգոր կաթողիկոսն»¹¹: Եվ արդյոք նաև, այդ վանքերի սեփականացումը կապ չուներ Վասիլի իշխանին տրված «գող» մականունի հետ:

Ի միջի այլոց, խոսելով Նիկոն Սկլեռնցու և Հովհաննես Օքսիտեցու նամակագրական կապի մասին, ուշագրավ է նշել հետևյալը. Նիկոնը, որին, հանձնարարված էր վերահսկել և քննել Խոփիթոն վանքում ապրող հայերի հավատարմության աստիճանը քաղկեդոնական դավանանքին, Անտիոքի հայրապետին ուղղված իր նամակներից մեկում գրում է, որ այստեղ ապրող հոգևորականները հավատարիմ են ուղղափառությանը: Միևնույն ժամանակ նա որոշ դգործություն է հայտնում, ասելով, որ ստիպված է եղել ապրել այլ լեզվով խոսող մարդկանց հետ այնպիսի վանքերում, որոնք ոչ թե եկեղեցուն են պատկանում, այլ տարբեր ազնվազարմ անձանց կամ էլ ինքնավար են¹²: Պատասխան նամակում Հովհաննես Օքսիտեցին խորհուրդ է տալիս գոտեպնդվել և կատարել իր առաքելությունը, ջանալով դարձի բերել ուխտագրուժներին, իսկ եթե չի ստացվում, պետք է գնալ մեկ այլ վանք: Ինչ վերաբերում է այլ լեզվով խոսողներին, Անտիոքի պատրիարքը նշում է, որ այդտեղ ոչ մի վտանգ չկա և, ընդհակառակը, դա անգամ օգտակար է ոգու համար¹³: Ի դեպ, գեռևս 1084 թ. Անտիոքի պատրիարքը (թերևս՝ Նիկեփորոս Մավրը) դիմում է Երուսաղեմի պատրիարքին, առաջարկելով քննություն սկսել հայ քաղկեդոնականների, այսպես կոչված «ծաթերի» ուղղափառ հավատին հավատարիմ լինելու վերաբերյալ: Այդ թուղթը, ինչպես նաև նույն հարցն արձարծող, երկու այլ հետաքրքրական նամակներ ներկայացված են Նիկոնի «Տակտիկոն»-ում՝ միայնակացների համար գրված կանոնադրության 35-րդ գլուխում՝ ա. Անտիոքի պատրիարքի նա-

<http://deusvult.ru/102-tserkovnye-kontakty-armyan-khalkidonitov-i-latinyan.html> և **O. Կազարյան**, “Роль армян-халкидонитов в латино-грузинских переговорах (1223-1224 гг.)”. -2012. URL: <http://deusvult.ru/89-rol-armyan-khalkidonitov.html>: Բոլոր դեպքերում Խոփիթոն վանքի վերաբերյալ մասնագետները նշում են. «Այն գտնվել է հայկական տարածքում, որը դեկավարում էր ծաթերի կողմից, ովքեր բաղկացնական էին հավատով» («It was located in Armenian territory ruled by the Tzatoi who were Chalcedonian in their faith»), “Byzantine Monastic Foundation Documents, 21. Roidion: Typicon of Nikon of the Black Mountain for the Monastery and Hospice of the Mother of God Tou Roidiou (trans. Robert Allison)”, *Dumbarton Oaks Research Library and Collection*, Washington D. C., 2000, p. 425:

¹⁰ **Գերդ**, «*Տակտիկոն*», с. 113, տե՛ս նաև՝ “Byzantine Monastic Foundation Documents, 21. Roidion”, p. 425.

¹¹ **Մ. Էմբի**, Միսիթարայ Այրիվանեցուց Պատմութիւն Հայոց, Մուկլա 1860, էջ 61, 1101. A. 550:

¹² **Գերդ**, «*Տակտիկոն*», с. 113, տե՛ս նաև՝ “Byzantine Monastic Foundation Documents, 20. Black Mountain”, **Robert Allison**, *Regulations of Nikon of the Black Mountain*, p. 382.

¹³ **Գերդ**, «*Տակտիկոն*», с. 113-114.

մակի պատճեն առ Եվթիմիոս Երուսաղեմացի (1080-?)¹⁴, բ. Սիմեոն Հրաշագործի մենաստանի նամակի պատճեն նույն Երուսաղեմի պատրիարքին, գ. Նիկոնի թուղթն ուղղված նորից Երուսաղեմի հայր Գերասիմին՝ Ս. Սաբբայի մենաստանից: Նկատենք, որ այս բոլոր ուղերձներն ուղղված են Երուսաղեմ, ինչը մի փոքր զարմանալի է և բացատրության կարիք ունի, թե ինչո՞ւ Անտիոքի պատրիարքն ինքնուրույն չէր կարող որոշել այդ հարցը: Մեկնաբանման կարիք ունի նաև հայ քաղկեդոնականների վերաբերյալ աճած հետաքրքրությունը, երբ չորս կողմը պատերազմող տարբեր խմբավորումներ էին, երբ թուրքերը հարձակվում էին ավելի ու ավելի մեծ ինքնավստահությամբ, շխնայելով անգամ սուրբ վայրերը (այսպես 1084 թ. Սուլեյմանն ավերեց Ս. Սաբբայի մենաստանը, անօթևան թողնելով այնտեղ ապրող բազում միայնակյացներին, որոնց մեծ մասը թերևս մտադիր էր ապաստան գտնել հենց Սև լեռան վանքերում): Այս ամբողջին հնարավոր է մի քանի բացատրություն տալ, որոնցից մեկը կարող է լինել Սև լեռան վանքերում և ընդհանրապես այդ տարածաշրջանում հայերի աճող թիվը:

Նիկոն Սևեռնցու այս և մի շարք այլ տեղեկությունները փաստում են, որ քաղկեդոնական դավանանք ընդունած հայերին, այնուամենայնիվ, լիովին չէին վստահում, ժամանակ առ ժամանակ քննության ենթարկելով նրանց «ուղղափառություն»-ը: Առկա են նաև, աղբյուրներ, որոնք վկայում են, որ կաթոլիկ եկեղեցու որոշ ներկայացուցիչների և որոշ խաչակիրների կողմից ևս քաղեդոնականությանը հարող հայերը հերետիկոսներ էին համարվում¹⁵: Սա իհարկե կապված էր նաև այն հանգամանքի հետ, որ քաղկեդոնիկ հայերի մեծամասնությունը շրաժարվեց մայրենի լեզվից և գեռևս Ս. Սաբբայի մենաստանում եկեղեցական ծեսերը նրանք կատարում էին հայերենով¹⁶:

Հարկ է նշել, որ Սև լեռան հայկական վանքերի գործունեության ուսումնասիրությունը շատ հետաքրքրական է նաև քաղաքական պատմության տեսակետից, որովհետև բացի այլազգի անձանց, և մասնավորապես պաշտոնյաների աշխուցք շփումներից այս համատեքստում նորից արդիական է դառնում առաքելական աթոռների հարցը: Այս մասին, ի դեպ, գրում է նաև հենց Նիկոն Սևեռնցին, շեշտելով, թե հարկ է հիշել, որ հենց Անտիոքն է Արևելքի հայութետական առաքելական աթոռը¹⁷:

¹⁴ Կազարյան, Церковные контакты ..., <http://deusvult.ru/102-tserkovnye-kontakty-armyan-khalkidonitov-i-latinyan.html>.

¹⁵ “Epistulae et chartae ad historiam primi belli sacri spectantes quae supersur aeo aequales ac genvinae. Die Kreuzzugsbriefe aus den Jahren 1088-1100”, Ein Quellensammlung zur Geschichte der ersten Kreuzzugs, hrsg. H. Hagenmeyer, Innsbruck, 1901. s. 161-165.

¹⁶ Պարզ է, որ աղոքները ևս ասկում կմն հայերեն, բացառույամբ «Սուրբ Աստուած» առողքի, որպեսզի հայերը չգայթակղվեին հավելել «որ խաչեցար վասն մեր» հայտնի արտահայտուրյունը, հմմտ. օրինակ ս. Սաբբայի մենաստանի կանոնադրությունը:

¹⁷ Այս թեման, ինչպես նաև Նիկոնի կողմից արծարծված Հայ առամելական եկեղեցում ընդունված պահոց շրջանների և մասնավորապես Առաջավորաց պահի վերաբերյալ դիտու-

Անդրադառնանք նաև այն հարցին, թե 11-րդ դարից այս կողմ ինչո՞ւ էին այդքան բազմամարդ Սև լեռան վանքերը: Հստ Կ. Մութաֆյանի շատերը փախչում էին՝ ակնկալելով ապահով ապաստան գտնել¹⁸: Այդ պատճառը միգուցե առկա էր և կարևոր, սակայն ինչպես բացատրենք Մեծ Հայքից մեկնողների պարագան և մասնավորապես Միսիթար Գոշի արտառոց օրինակը, երբ նա թաքցնելով իր վարդապետական իշխանությունը, նորից ստացավ այդ կոչումը Սև լեռան Արքայակաղին վանքում: Բացի այդ, ինչպես ակնհայտ է Մատթեոս Ալոհայեցու հետեւյալ տեղեկությունից, երբ բորբոքվում էին ուազմական կրքերը, Սև լեռան վանքերն այլևս չեին կարող մարդկանց համար թաքստոց դառնալ.

«Ես գայր խաղայր բազմութեամբ զօրօֆ եւ արար ձմերոց ի Սեւ լեառն. եւ ահազին արեան հեղութիւն եւ կրտորած լիներ յամենայն գաւառն, եւ բազում անձինք ի սրբոց կրօնաւորացն մատնեցան ի բերան սրոյ եւ յայրումն հրոյ եւ եղեն կերակրու գազանաց եւ թոշնոց եւ ոչ ժամանեցին ծածկիլ հողով, վասն զի մնացին անթաղի մինչեւ յափեանս. եւ անրի վանորայի եւ գեղի այրեցան հրով, որք երեփին մինչեւ ցայսօր. եւ Սեւ լեառն եւ ամենայն գաւառն ի ծայրէ ի ծայր լցաւ արեամբ կրօնաւորաց եւ բահանայից եւ արանց եւ կանանց ծերոց եւ տղայոց`...»¹⁹

Քիչ ստորև Մատթեոս Ալոհայեցին նորից է անդրադառնում Սև լեռան վանքերին, պատմելով թե ինչպես էին հայ իշխաններն օգնում կերակրով այդտեղ բնակվողներին²⁰: Իսկ «Ժամանակագրության» երրորդ մասից տեղեկանում ենք.

«Յայնժամ դասի բահանայիցն, որք էին ի բաղան յմտիա, ազդ արարին թղթով Տեառն Գրիգորիսի Հայոց կաթողիկոսի, որ բնակեալ էր ի Սեւ լեառն, ի յանունի անապատն, որ կոչի Արիգի. եւ նա գրով ձեռին իւրոյ հաստատեաց զնոսա անշարժ կեալ ի հաւատս ուղղափառութեանն»²¹:

Բավական լայնածավալ հատված կա նաև Գրիգոր երեցի «Շարունակութիւն» մասում (Մատթեոս Ալոհայեցու ժամանակագրության շարունակությու-

ղույժունները, ինարկե ուշագրավ են, սակայն առանձին ուսումնասիրության նյութ են, որոնց անհնարին է անդրադառնալ սույն հաղորդման շրջանակներում:

¹⁸ C. Mutafian, *L'Arménie du Levant (XIe-XIVe siècle)*, p. 602-604, հմմտ. նաև 164, 331, 452, 479:

¹⁹ Մատթեոս Ալոհայեցի, ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 185-186: Զափանց հետարքրական են նաև Վասիլ իշխանին նվիրված բազում հատվածները, որոնց վերուժությունը կարևոր տեղեկություններ է ընձեռում այդ իշխանի գործունեության, ինչպես նաև Հայաստանի հոգևորականների հետ ունեցած նրա հարաբերությունների մասին, առև, նույն տեղում, էջ 50. «Ես դարձաւ Տէր Պետրոսն մեծաւ պարզեած յաշխարհն Հայոց: Իսկ Վասիլն յետ ժամանակաց զայ յԱնտիրի ի ծածուկ Գ արամբ հաւատարմօֆ եւ եկեալ ի Սեւ լեառն ի տեղին, որ կոչի Պաղակծիակ, եւ ի հօրէ եւ յառաջնորդէ տեղույն առնու զերխառոսական կնիքն եւ յայնմ հետէ եղեւ որպէս զիայր աշխարհիս Հայոց...»:

²⁰ Նոյն տեղում, էջ 259:

²¹ Նոյն տեղում, էջ 287:

նը), որը գրեթե լիովին նվիրված է Վասիլ իշխանին՝ նրա ծավալած գործունեությանը, նրան պատկանող տարածքներին և այլն²²:

Հետաքրքրական է նաև այն փաստը, որ հաճախ Սև լեռը և այդտեղ եղած վանքերը, թե՛ հունական²³, թե՛ հայկական (ինչպես կտեսնենք ստորև) աղբյուրներում վկայակոչվում են որպես «սուրբ». մեզանում անգամ կան առասպելաբնույթ պատմություններ, կապված այդ սարի և վանքերի հետ (օրինակ ասվում է, որ խավարն Ամանոսի լեռների վրա անհայտանում էր և մի զարմանահրաշ լույս էր իշնում դրանց վրա):

Մասնավորապես կարևոր և արժեքավոր են հայկական ձեռագրերի հիշատակարանները, որոնք թերևս ամենաշատ տեղեկություններն են հաղորդում խնդրո առարկա վանքերի վերաբերյալ: Այսպես՝ 15-րդ դարի Ավետարանում՝ տեղ է գտել հետաքրքրական մի հիշատակարան, որը բացատրում է, թե որտեղ է գտնվում Կարմիր վանքը և ինչի հետ է կապված դրա անվանումը:

Դարձեալ, աղաջեմ զձեզ, առաջնորդի և միաբան սուրբ ուխտիս Կարմիր վանիցս, որ խնամ ածիք սուրա և լավ բռնիք, կատարողի աղաջանաց մերոյ աւրինեալ եղիցին]: Աղաջեմ զձեզ եղբարք, եթէ ի յարկածից շարին եղանէ Աւետարանս ի Կարմիր վանացս եւ երթայ ի յայլ տեղ, թէ ի մատու լարձուցանիք ի վանիս: Աստուածային աւրինութեամբն աւրինի բերալը ի վանին: Զի Կարմիր վանիս ի վերայ ապառած քարի է. հողն կարմիր է. յարևելից կողմն Ագրակն է և Պատղանն. յարևմտից դեհն՝ սուրբ Էհան, Հազարին և Աղկազն, հարաւային կողմն՝ Զմշկածագ բաղան, հիսխասային կողմն՝ Ակներն և Սեղընկայ լեսան՝²⁴:

Հիշատակարանն ուշագրավ է ոչ միայն բազմաթիվ կարևոր տեղանունների և դրանց տեղայնացման հաղորդագրությամբ, այլև այն առումով, որ այստեղ շատ գեղեցիկ կերպով ներկայացված է մեզանում ամենուրեք վկայված ձեռագրերի նկատմամբ եղած վերաբերմունքը որպես շնչավոր էակի. Կարմիր վանքի Ավետարանը կարող է «Ելանէ» և «Երթայ ի յայլ տեղ»: Ի դեպ, սա էլ մեկ այլ ավանդական մոտեցում է. երբ սուրբ գիրքն իր տունը լքում է, ինչը շատ վատ է համարվում, նրան պետք է անպայման վերադարձնել: Այս հիշատակարանը հետաքրքրական է նաև, որ այստեղից տեղեկանում ենք, որ ժեղարի վերջում (1090-1091) երկրաշարժ²⁵ ապրած Կարմիր վանքը, փաստորեն ժեղարում նորից վերականգնված վիճակում է: Հատկանշական է, նաև որ այս

²² Նոյն տեղում, էջ 370-371, մասնավորապես հետևյալ հատվածը. «...ապա եկեալ արանց իրեւ երեսնից մտին և այթեցին գֆաղաբն Քեսուն և զբրուն խաղամին. եւ զբանայարկ ապարանսն, զոր շինեալ էր մեծ իշխանն Հայոց Գող Վասիլին, եւ զայլ շինս, զոր բարձագոյն տեսին, եւ իմեսանն զնացին փախստական եւ հասին այլոց ընկերաց իւրեանց»:

²³ Օրինակ, նոյն Նիկոնն այդպես է բնուրագրում Ծոփիդոն վանիք, *Byzantine Documents*, 20. Black Mountain, p. 429:

²⁴ Լ. Խաչիկյան, ժեղարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Գ, Եր., 1967, էջ 479:

²⁵ Այս երկրաշարժի մասին հայտնում է նաև Նիկոն Սկեռնցին, տես՝ Գերդ, «Տակտիկոն», с. 114, 26:

Ավետարանը գրվել է հենց Կարմիր վանքում, գրիշ Ալէքսիանոսի կողմից և, ի թիվս այլ ձեռագրերի, մեկ անգամ ևս փաստում, որ Սև լեռան վանքերում հայկան գրչագրեր էին ստեղծվում:

ԺԵ դ. հայտնի են նաև այլ հիշատակարաններ, որոնցից պատկերացում կարելի է կազմել Կարմիր վանքում աշխատող հոգևորականների և այդտեղի անցուղարձի մասին²⁶:

Հիշատակարանները տեղեկություններ են հայտնում նաև վանքերի անվանումների, ինչպես նաև գրանց՝ հայերի ձեռքն անցնելու ժամանակի և պարագաների վերաբերյալ: Այս առումով ուշագրավ է Գրիգոր Վկայասեր կաթողիկոսի ստացած ձեռագրերից մեկի հիշատակարանը. այն բավական մանրամասն անդրագառնալով Գրիգոր Վկայասերի տոհմին, տեղեկացնում է նաև 1065-1110թթ. հայկական դարձած Պառլահո վանքի մասին.

«Ել ապա ի յատաջասացեալ ամդ հասաֆ ի սուրբ լետոնն, զոր Սեաւն կոչեն, ի մեր սեփիական պարգեալան եկեղեցին յոխտն սուրբ, զոր ըստ ասորի բարբայոյ (sic!) Պառլահոյ կոչի, որ բարգմանի «Դրախտ Աստուծոյ», եւ անդ յերեսուն և ի վեց ամի մերոյ արռոակալութեան՝ բարգմանեցի զվարս նզնութեան մեծ և սխանշելի առնն Աստուծոյ Յովիաննու Ուսկերեանի Կոստանդնուպալսի հայրապետի, ի ձեռն առն միոյ, որում անուն էր Թէոփիխատէ, ազգաւ յոյն: Ել ապա ետու վերստին արծարծել զաս ի տարաքան և յատարաձայն բայից և բառից առաջին բարգմանութեանն, ըստ Քերողացն իմաստից՝ միաշար տողելով ի ձեռն Մա[տ]-թեոսի հահանայի, որ սնեալ և վարժեալ էր ընդ մերով ձեռամբ»²⁷:

Այստեղ վկայակոչված Թեոփիստեն հենց այն փիլիսոփան է, որի դեմ ուղղված է Պողոս Տարոնացու հայտնի Թոուլը ընդդիմ Թէոփիստեայ հոռոմ Փիլիսոփային գործը: Ի դեպ, Թեոփիստեն և Կիրակոս Հոետորը մեզանում ամենավաղ վկայված (իհարկե Անանիա Շիրակացու Տյուքիկոսից հետո) օտարերկրյա հայագետներ էին, որոնց Գրիգոր Վկայասերը հանձնարարել էր հունարենից հայերեն մի քանի գրվածքներ թարգմանել (հիմնականում մեկնություններ), վճարելով շատ մեծ գումար: Սակայն դրանք խրթին և անհասկանալի էին ստացվել և այդ պատճառով վերահանձնվել էին Կիրակոս Դրազարկցուն, որ-

²⁶ Տես օրինակ՝ ԺԵ դարի հիշատակարաններ, մասն Գ, էջ 173, 342-343, 382, 487, 497 և այլն: Այս առումով շափազանց ուշագրավ է նաև Սարգիս Շնորհալու «Մեկնութիւն Կարողիկեայց բղբոց»-ը պարունակող ձեռագրի բավական լայնածավալ հիշատակարանը, տես՝ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., աշխ. Ա. Մաթևոսյանի, Երևան, 1988, էջ 169-173: Հետաքրքրական է նաև, որ նշվում է, որ Սարգիս Շնորհալին, ով «զնաց ի յաշխարհն Կիլիկեցցց և եմուա ի Սեաւ լետոնն, ուր էին բազում անապատ և վանորայք» և սովորեց Կարմիր վանքում աշակերտելով Ստեփանոս Մանուկին, հետազայում ավելի ժումկալ կյամք վարելու համար հաշվեց Քարաշխոտ վանք, որտեղ և անց կացրեց կյամքի մեջացած մասը: Այս տողերից կարելի է ենթադրել, որ Կարմիր վանքում այդքան էլ ժումկալ կյամք չին վարում:

²⁷ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., էջ 135-136:

պեսզի նա (թերեւ անվճար) խմբագրեր և սրբագրեր դրանք: Նշենք նաև, որ այս պատմական դրվագը ևս վկայում է Սև լեռան վանքերում որոշ համագործակցության մասին:

Իսկ 1098 թ. Պառլա՛ռոյում գրված, «Կանոնագիրք»²⁸ պարունակող ձեռագրում առկա է մեկ այլ հետաքրքրական հիշատակարան, որից տեղեկանում ենք, որ այս ձեռագիրը գրվել է.

«...ի հայրապետութեան աստուածապատիւ տեառն Գրիգորիսի, ի զարմէ Մրբոյն Գրիգորի», և որ «ին սորա ուսումնակից եւ վարժակից վարդապետ սուրբ եւ առաքինազարդ Գիորգ Մեղրն կոչեցեալ, եւ Կիրակոս արք վարժի յաստուածայինս ուշ ունելով մարգարէական երանութեանցն յաւէնս Տեառն իորբերովն ի տա և ի գիշերի փոյթ յանձել եւ յուսուցանել եւ նշմարտագէտ դեղովք ապաշխարութեան զբազում արժանացուցին շնորհին»²⁹:

Ուշագրավ են նաև ներսես Լամբրոնացու ձեռքով կամ նրա մասին գրված հիշատակարանները, որոնք փաստում են մեկ անգամ ևս այն մեծ և ծավալուն գործունեությունը, որ կատարել է այս «առաքելաշատի հայրապետ»-ը, որի համար «սերը դեպի գիտություն նույնն է, ինչ որ սերը դեպի Աստված»: Իսկ նրա «Վարքում» զետեղված տեղեկությունները Սև լեռների անապատներում ու վանքերում անցկացրած ժամանակի վերաբերյալ, կարծես անդրադարձ կա այդ լեռների վանքերում տրվող կրթության առանձնահատկություններին և ընդգծված է միայնակացների համար բնորոշ և հայկական դպրության մեջ ընդունված «տեսական»-ի և «գործնական»-ի համադրությունը.

«Եւ սրբոյ հայրապետին ուրախացեալ ընդ յառատ ուսումն մանկանն, առամեաց զնա ի վանուրայս ի Սեւան լերինն, յորս շրջելով գործիական նիազութեամբն և տեսողականին կրթութեամբ՝ յառաջէր և նկրաչէր հասանել ի լրումն առաքինութեանն ի սերն Քրիստովի»³⁰:

Հարկ է նշել նաև, որ Սև լեռան հայկական վանքերն այնքան մեծ կարևորություն են վայելել, որ դրանց թվում եղել է նաև կաթողիկոսանիստ վանք. օրինակ՝ Կարմիր վանքը: Իսկ 1113 թ. կաթողիկոսական աթոռի համար Գրիգոր Գ. Պահապունու և Աղթամարի Եպիսկոպոս Դավիթ Արծրունու վեճի առիթով, այստեղ անգամ գումարվել է եկեղեցական ժողով, որին մասնակցել են 2500 եպիսկոպոսներ՝³¹

²⁸ Նշենք Կանոնագրի ընօրինակման այս փաստը, այս վամբերում կարծես թե շատ ընդունված էր զբաղվել նաև կանոնագիտական հարցերով (հիշենք նիկոն Սևեռնցուն նրա երեք կանոնական գրվածքներով): Արդյոյն Միսիքար Գոշն է հենց այստեղ չի՝ հղացել ստեղծել իր «Թատաստանագիրք»-ը:

²⁹ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., էջ 117:

³⁰ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., էջ 257:

³¹ Ա. Միսիքարյան, Պատմութիւն ժողովոց Հայաստանեաց եկեղեցւոյ, Վաղարշապատ, 1874: Ա. Օրմանյան, Աղքապատում, հ. 1, Կոստանդնուպոլիս, 1912:

E. M. Shirinian
**Teaching and Learning at the Armenian Monasteries on the Black
 Mountain of Cilician Armenia**

Having been in the same lore with the literature of Armenia nevertheless Cilician Armenian literature differed from it due to many natural reasons, among which the most important one seems to be a different environment and neighborhood. In this context a significant role played Cilician monasteries of Black Mountain. The existence of these monasteries is testified from the 5th-6th centuries but there is no much information about activity of these monasteries at that time. Opposite to this, starting from the 11th century one can speak about the most flourishing and one can say ‘international’ period for the activities at the Black Mountain’s monasteries. It is even possible to evaluate them as an international center of teaching and learning for Greek, Syrian, Latin, Armenian and Georgian monks, ascetics and simply authors, who came in search of a spiritual guide.

Testimonies concerning the monasteries on the Black Mountain, which belonged to Armenians (at least in the 11th century: Karmir, Shapirin, Areg or Aregni, Vardkan, K’arashit’u, Barsegheanc’, Mashkevor, Paghakdziak, Parlahoy etc.) preserved in the works of the Armenian authors and especially in the colophons etc. That there were lot of monasteries on the Black Mountain informs us Sargis Shnorhali, who says about Barsegh catholikos that “he went to the country of Cilicia and entered on the Black Mountain where eremitic (anapatk’) - and convents (vanorayk’) were too many”. It is noteworthy also the story told by Kirakos Gandzakec’i about Mxitar Gosh or Gandzakec’i, according to which Mxitar was already a vardapet when he went to the monasteries on the Black Mountain but he hided that he has already this degree and received another one while being there. There is also quite an information on *personae* who came to settle in these monasteries as from Armenia itself (like Georg Megrik, Grigor Lorec’i, Kirakos the Philolog, Mxitar Gosh and many others), as well from Cilician Armenia (Stepanos Manuk, Ignatius Sevlernc’i (=of the Black Mountain), Nerses Shnorhali, Sargis Shnorhali). The activity of the catholicos of Armenia Grigor the Second, Vgayaser (“the Martyrophile”) in these monasteries, especially in *Karmir Vank’* (“Red Monastery”) is attested as well in these sources.

The research of the data on these monasteries shows that one can speak about the reconciliation of old traditions and the creation of the new approaches by the ‘Armenian School’. In any case, the learning and many-sided literary activity in the monasteries on the Black Mountain had a great impact for Armenian highest education and literary tradition.